

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պրն. Ա. Ջավադյանին**

Հարգելի պարոն Ջավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է առդիր 1 թերթ):

Գործադիր տնօրեն

Պապ Բադալյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի պահանջի, բացահայտում են «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

1. «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ն 2010թ-ի դեկտեմբերի 28-ին տեղի ունեցած բաժնետերերի արտահերթ ժողովի ընթացքում որոշել է ավելացնել 100% սեփականության իրավունքով իրեն պատկանող «Շեն Գրուպ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը 810.0մլն դրամով (81000 հատ սովորական անվանական բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 10000 դրամ անվանական արժեքով), որի համալրումը իրականացվել է 2010թ-ի դեկտեմբերի 29-ին: Արդյունքում «Շեն Գրուպ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը դարձել է 1.0 մլրդ ՀՀ դրամ: Կատարված ներդրման նպատակը գիպսի հիմքով մի շարք արտադրատեսակների (գիպսակարտոնի, գիպսբլոկի և գիպսային շաղախի) նոր գործարանի կառուցումն է, որն իրագործելու նպատակով նախատեսվում է նաև ձեռքբերել «Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս» ՍՊԸ-ի բաժնեմասերը, նպատակ ունենալով օգտագործել այդ Ընկերության արտադրական տարածքը, անշարժ գույքը և ենթակառուցվածքները: Բաժնեմասերի ձեռքբերումից հետո վերջինս վերակազմակերպման միջոցով այն միացվելու է «Շեն Գրուպ» ՓԲԸ-ին:

2. «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի բաժնետեր Սամվել Բեգլարյանի կողմից ամբողջովին մարվել է 27.04.10թ-ի համաձայնագրով Սամվել Բեգլարյանին անցած պարտավորության 145.6 մլն դրամի մնացորդը:

3. «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի անկանխիկ դրամական միջոցների համալրման նպատակով Ընկերությունը 29.12.10թ-ի անտոկոս նպատակային փոխառության պայմանագրի համաձայն բաժնետեր Սամվել Բեգլարյանից ստացել է 435.0 մլն դրամի փոխառություն և նույն օրը մարել է այն: